

ք.Եղեգնաձոր

23 մարտի 2022թ.

**Վայոց ձորի մարզի վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման հանձնաժողովի նիստի**

**Նիստի մասնակիցներ.**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Կարապետյան Լիլիա՝ Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ:

**Հանձնաժողովի անդամներ՝**

Ասատրյան Կարեն՝ <<Եղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն, հանձնաժողովի անդամ,

Ծերունյան Բյուրեղ՝ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ համաճարակաբան, հանձնաժողովի անդամ,

Արշակյան Նելլի՝ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ համաճարակաբան, հանձնաժողովի անդամ,

Հանիսյան Էմմա՝ <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ, հանձնաժողովի անդամ,

Նալբանդյան Մանուշակ՝ <<Ջերմուկի ԱԿ.. ՓԲԸ-ի տնօրեն, հանձնաժողովի անդամ,

Սարգսյան Հեղինե՝ հանձնաժողովի քարտուղար:

**Հրավիրված անձինք՝**

<<Մալիշկայի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Գ.Հարությունյան, ընտանեկան բժիշկ՝ Ա.Շահրամանյան:

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

1. Արտաընդերային վիրուսային հեպատիտների 2021 թվականի համաճարակային իրավիճակը՝ առկա խնդիրները վեր հանել և դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնել: /զեկուցող՝ Բ.Ծերունյան/
1. Ընթացիկ հարցեր և առաջարկություններ:
2. Հանձնաժողովի նիստի ամփոփում:

**Լսեցին՝**

1. Հանձնաժողովի նիստը ղեկավարեց Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Լ.Կարապետյանը և ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը:

**Արտահայտվեցին՝**

ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի բժիշկ-համաճարակաբան Բ.Ծերունյանը ներկայացրեց արտաընդերային վիրուսային հեպատիտների 2021 թվականի համաճարակային իրավիճակը: Նիստի ընթացքում ընդգծվեց, որ վիրուսային հեպատիտներն առողջապահության գերակա խնդիր են և ունեն արտահայտված համաճարակային ներուժ, լայն տարածում և զգալի սոցիալ-տնտեսական բեռ:

Նշվեց, որ մարզում վերջին 5 տարվա ընթացքում առավելագույն դեպքերը հայտնաբերվել են 2019 թվականին՝ 18 դեպք: Հիվանդացության ցուցանիշներն աճել են (բացառությամբ 2020-2021 թթ), որը պայմանավորված է ՀՀ-ում հակաճնակիրների հայտնաբերման գործընթացի ներդրման հետ:

Մարզում վերջին 5 տարվա ընթացքում վիրուսային հեպատիտի ցուցանիշներն ըստ տարիների եղել են՝ 2017թ.-ին՝ 3 դեպք, 2018թ.-ին՝ 11 դեպք, 2019թ.-ին՝ 18 դեպք, 2020թ.-ին՝ 9 դեպք, 2021թ.-ին՝ 9 դեպք:

Քննարկվող հարցերի շուրջ արտահայտվեցին «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն Կ.Ասատրյանը, ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մարզային կենտրոնի բժիշկ-համաճարակաբան Բ.Ծերունյանը, Ն. Արշակյանը, Մալիշկայի ԱԱՊԿ-ի տնօրենը:

Քննարկվեցին մարզում հեպատիտների հայտնաբերման և ախտորոշման, արտաընդերային հեպատիտների համաճարակաբանական հսկողության և կանխարգելման ոլորտներում առկա խնդիրները:

### **Քննարկման արդյունքում նիստը որոշեց.**

1. Կարճ ժամկետում վերացնել բժշկական կազմակերպություններում առկա թերությունները և բացթողումները:
2. Ակտիվացնել աշխատանքները ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ Վայոց ձորի մարզային մասնաճյուղի հետ:
3. Հանձնարարել բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ ցուցաբերել անհրաժեշտ վերաբերմունք ներհիվանդանոցային միջամտություններով պայմանավորված, ինչպես նաև արտաընդերային ճանապարհով փոխանցվող վարակների հայտնաբերման և հաղորդման նկատմամբ:
4. Ձեռնարկել հնարավոր միջոցները համապատասխան մասնագետների վերապատրաստման համար արտաընդերային վիրուսային հեպատիտների հայտնաբերման աշխատանքները տեղում կատարելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝  Լ. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝  Ս. Սարգսյան